ՎԴ/6525/05/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 սեպտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Աննետա Կիրակոսյանի ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նախկին նոտար Ռոզա Սահակյանի՝ որպես ոչ իրավաչափ նոտարական գործողությունների արդյունքում պատճառած վնասի հատուցում՝ հօգուտ հայցվորի 7.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, թիվ ՎԴ/6525/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Աննետա Կիրակոսյանը 2023 թվականի օգոստոսի 18-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նախկին նոտար Ռոզա Սահակյանի՝ պահանջելով հօգուտ հայցվորի բռնագանձել 7.000.000 ՀՀ դրամ՝ որպես ոչ իրավաչափ նոտարական գործողությունների արդյունքում պատճառած վնասի հատուցում:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ, գործի ենթակայությունը որոշելու նպատակով, այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի սեպտեմբերի 20-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ և 81-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/0477/05/15 գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Տվյալ դեպքում հայցադիմումում որպես պատասխանող է նշված ֆիզիկական անձ՝ նախկին նոտար Ռոզա Լևոնի Սահակյանը և նկատի ունենալով, որ Օրենսգրքի 3-րդ և 10-րդ հոդվածների իրավակարգավորման համաձայն, վարչական դատարանում քննության են ենթակա հանրային իրավահարաբերություններից ծագող այն գործերը, որոնք առաջացել են ֆիզիկական և կամ) իրավաբանական անձանց ու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի (վարչական մարմնի) միջև առաջացած վեճի վերաբերյալ (առարկայական ընդդատություն), հաշվի առնելով, որ սույն պարագայում վեճի առարկա իրավահարաբերությունները ծագել են երկու ֆիզիկական անձանց միջև, Դատարանը գտնում է, որ վարչական դատարանին հանձնվող վեճի Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սուբյեկտների լիարժեք կազմի (ֆիզիկական կամ իրավաբանական անձ մի կողմից, պետական կամ*

տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձ մյուս կողմից) բացակայության պայմաններում, գործող դատավարական իրավակարգավորումների համաձայն սույն վեճը չի բխում հանրային իրավահարաբերություններից և ըստ դրա ենթակա չէ վարչական դատարանում քննության (առարկայական ընդդատություն):

Ընդ որում, սույն վեճը ենթակա չէ վարչական դատարանում քննության նաև Օրենսգրքի 31-րդ՝ «Նոտարի գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործեր վարույթը» վերտառությամբ գլխի համապատասխան նորմերի համաձայն, քանի որ այդ նորմերը վերաբերում են բացառապես գործող նոտարներին»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին, 220-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացրած որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի սեպտեմբերի 18-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Նշվածի լույսի ներքո անդրադառնալով ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի կարգավորումներին, Դատարանն արձանագրում է, որ այն բովանդակում է հատուկ վարույթներ, որոնցից 31-րդ գլխով սահմանված հատուկ վարույթ է հանդիսանում նոտարական գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթը:*

(…)

Դատարանն արձանագրում է, որ քննարկվող գործի շրջանակներում ներկայացվել է ոչ իրավաչափ նոտարական գործողության կատարմամբ պատճառված վնասի հատուցման պահանջ, որն ամբողջությամբ համապատասխանում է ՎԴՕ 220-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հատկանիշներին և հանդիսանում է վարչական դատարանի քննության ենթակա գործ:

Վարչական դատարանի այն մեկնաբանությունը, որ հայցը ներկայացված է ոչ թե գործող նոտարի, այլ պաշտոնաթող նոտարի դեմ, որի արդյունքում կողմերի միջև հարաբերությունները կրում են մասնավոր, այլ ոչ թե հանրային բնույթ, չեն բխում ՎԴՕ

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 43-44:

220-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի տրամաբանությունից, քանի որ օրենսդիրը վնասի հատուցման իրավահարաբերությունը կախման մեջ է դրել կոնկրետ իրավաբանական փաստից, այն է՝ նոտարական գործողության կատարումից, հետևաբար, անկախ նրանից, նոտարական գործողությունը կատարած նոտարը աշխատում է, թե՝ ոչ, դրա արդյունքում չի փոխվում վնասի հատուցման իրավահարաբերության հիմքում ընկած իրավաբանական փաստը, այն է՝ ոչ իրավաչափ նոտարական գործողության արդյունքում պատճառված լինելը, որն էլ իր հերթին հանդիսանում է այն հանրային իրավահարաբերությունը, որի շրջանակներում ծագել է անձի վնասի հատուցում պահանջելու իրավունքը»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի եզրահանգումն այն մասին, որ թիվ ՎԴ/6525/05/23 գործն ըստ հայցի՝ Անահիտա Կիրակոսյանի ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նախկին նոտար Ռոզա Սահակյանի՝ որպես ոչ իրավաչափ նոտարական գործողությունների արդյունքում պատճառած վնասի հատուցում՝ հօգուտ հայցվորի 7.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (...)»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 54-57:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով կայացված թիվ ՎԴ/0830/05/14 որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ*

լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

10. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության աղբնթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոհփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. *«[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

---

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը»[4]:

11. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել նոտարական գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ հարաբերությունները կարգավորող իրավական նորմերին:

12. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Նոտարն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (...), սույն օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի ու Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (...) հիման վրա»:*

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *«Նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իրականացնում է սույն օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ: Նոտարի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են միայն սույն օրենքով: (...) »:*

---

4 Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հոիփսիմե Իշիկյանի* թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

Նշված օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Անձը, որի շահերը շոշափում է նուրարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նուրարական գործողություն կատարելը, կարող է կատարված նուրարական գործողությունը կամ նուրարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել դատարան»:*

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Նուրարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից թույլ տրված խախտման հետևանքով պատճառված իրական վնասի համար:*

Նուրարի՝ պաշտոնից ազատվելու դեպքում նուրարի կատարած նուրարական գործողությունների կամ նուրարական այլ ծառայությունների կատարման կամ դրանց կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատարանում որպես պատասխանող հանդես է գալիս նուրարական պալատը, իսկ վնասի, այդ թվում՝ դատական ծախսերի հատուցման պահանջներով՝ պաշտոնից ազատված նուրարը: Նուրարի նշված պարտավորությունը ժառանգման կարգով իրավահաջորդության ենթակա չէ»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են՝*

1) նուրարական գործողության կամ նուրարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը.

2) նուրարական գործողության կամ նուրարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Անձը նուրարական գործողության կամ նուրարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ պահանջ կարող է ներկայացնել նուրարական գործողության կամ նուրարական գործողության կատարման մերժման իրավաչափությունը վիճարկելու պահանջի հետ միաժամանակ կամ երեք տարվա ընթացքում այն օրվանից հետո, երբ սույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասի համաձայն կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ»:*

13. Վերոգրյալ իրավական նորմերի բովանդակությունից բխում է, որ նոտարը գույքային պատասխանատվություն է կրում իր կողմից թույլ տրված խախտման

հետևանքով պատճառված իրական վնասի համար, և նոտարի՝ պաշտոնից ազատվելու դեպքում, նոտարական գործողության կամ դրա կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասի, այդ թվում՝ դատական ծախսերի հատուցման պահանջներով, դատարանում որպես պատասխանող հանդես է գալիս պաշտոնից ազատված նոտարը: Ըստ այդմ՝ նոտարի գործողությունների իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերի քննությունը կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նոտարի գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 31-րդ գլխով սահմանված հատուկ վարույթի կանոններով: Հետևաբար նոտարական գործողության կամ դրա կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատավորության օրենսգրքի վերոնշյալ գլխով սահմանված նորմերին համաձայն: Ընդ որում, նոտարական գործողության կամ դրա կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ պահանջը կարող է ներկայացվել ինչպես նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարման մերժման իրավաչափությունը վիճարկելու պահանջի հետ միաժամանակ, այնպես էլ նոտարական գործողությունը կամ դրա կատարման մերժումը ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտի՝ օրինական ուժի մտնելուց հետո, առանձին՝ օրենքով սահմանված ժամկետում:

Վերոգրյալի լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ նոտարական գործողության կամ դրա կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասի հատուցման իրավահարաբերության հանրային բնույթը որևէ կերպ պայմանավորված չէ ինչպես նոտարի՝ պաշտոնից ազատված լինելու, այնպես էլ նոտարական գործողության կամ դրա կատարման մերժումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջից առանձին ներկայացնելու հանգամանքներով:

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Աննետա Կիրակոսյանը 2023 թվականի օգոստոսի 18-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նախկին նոտար Ռոզա Սահակյանի՝ որպես ոչ իրավաչափ

նոտարական գործողությունների արդյունքում պատճառած վնասի հատուցում, հօգուտ հայցվորի 7.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին[5],

- ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սույն պարագայում վեճի առարկա իրավահարաբերությունները ծագել են երկու ֆիզիկական անձանց միջև, և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ սուբյեկտների անհրաժեշտ կազմի բացակայության պայմաններում, սույն վեճը չի բխում հանրային իրավահարաբերություններից և ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին[6],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում եզրահանգել է, որ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունները քաղաքացիաիրավական չեն, և անկախ նրանից, թե նոտարական գործողությունը կատարած նոտարը աշխատում է, թե՝ ոչ, ոչ իրավաչափ նոտարական գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունը հանդիսանում է հանրային իրավահարաբերություն[7]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-13-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում Աննետա Կիրակոսյանի և Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նախկին նոտար Ռոզա Սահակյանի միջև ծագած վեճը վերաբերում է նոտարական գործողության կատարման արդյունքում պատճառված վնասը հատուցելուն, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

16. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/6525/05/23 գործն ըստ հայցի՝ Աննետա Կիրակոսյանի ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նախկին նոտար Ռոզա

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Սահակյանի՝ որպես ոչ իրավաչափ նոտարական գործողությունների արդյունքում պատճառած վնասի հատուցում՝ հօգուտ հայցվորի 7.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

17. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ Աննետա Կիրակոսյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/6525/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/6525/05/23 գործն ըստ հայցի՝ Աննետա Կիրակոսյանի ընդդեմ Երևան քաղաքի «Կենտրոն» նոտարական տարածքի նախկին նոտար Ռոզա Սահակյանի՝ որպես ոչ իրավաչափ նոտարական գործողությունների արդյունքում պատճառած վնասի հատուցում՝ հօգուտ հայցվորի 7.000.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ